ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս լուծում է հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցն ենթակա է մերժման, գալիս է այն եզրահանգման, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.08.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետք է այն վերացնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. ԱՄԱ ՄԵԴԻՔԼ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության՝ հայտը մերժելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու գնահատող հանձնաժողովի 26.07.2024 թվականի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. ԱՄԱ ՄԵԴԻՔԼ ՍՊ ընկերությունից հօգուտ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության բռնագանձել 70.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատվության գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանի 23.08.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն վերացնել:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**